

ՔՈՎԻԴ-19-ի ներգործությունը երեխաների առցանց պաշտպանության վրա

Ապրիլ 2020թ.



ՔՈՎԻԴ-19-ը ստիպեց ամենուրեք փակել դպրոցները և ձեռնարկել ֆիզիկական հեռավորությունն ապահովելուն ուղղված միջոցառումներ, ձևավորել առցանց հարթակներ և հանրույթներ, որոնք կարևորագույն նշանակություն ունեն սովորական առօրյայի տպավորությունն ապահովելու համար: Երեխաները և նրանց ընտանիքները, առավել քան երբևէ, դիմում են թվային լուծումների՝ ի աջակցություն երեխաների ուսման, սոցիալիզացիայի և խաղերի: Թեև թվային լուծումները հսկայական հնարավորություններ են ընձեռում երեխաների իրավունքները պահպանելու և խթանելու համար, նույն այդ գործիքները կարող են ավելացնել նաև երեխաներին սպառնացող առցանց ռիսկերը: Սույն տեխնիկական տեղեկանքում տեղ են գտել մի շարք հիմնական առաջնահերթություններ և առաջարկություններ առ այն, թե ինչպես կարելի է մեղմել այդ ռիսկերը և երեխաներին ապահովել դրական առցանց գործունեության հնարավորություններով:

ՔՈՎԻԴ-19-ը երեխաների առօրյա կյանքը կտրուկ հակեց դեպի առցանց դաշտ

- 2020 թվականի ապրիլի 3-ի դրությամբ ՔՈՎԻԴ-19-ը հանգեցրել է **դպրոցների համապետական փակման՝ առնվազն 188 երկրում**, որը անդրադարձել է աշխարհում աշակերտների ընդհանուր թվի 90%-ի վրա:
- Այն վայրերում, որտեղ թվային տեխնոլոգիաները լայնորեն հասանելի են, մարդկանց առօրյա կյանքի ավելի ու ավելի շատ բաղադրիչներ են անցնում առցանց դաշտ, քանի որ մարդիկ որոշում են մնալ տանը կամ նրանց խնդրում են այդպես վարվել: ՔՈՎԻԴ-19-ի տարածումից ի վեր աշխարհի տարբեր ծագերում **ինտերնետի գործածությունը հասել է 50%-ի**:
- Նմանապես, բազմաթիվ երեխաների ուսումնառությունը վերափոխվել է՝ հեռավար ուսուցման անակնկալ ներդրման արդյունքում, այդ թվում, հնարավորության դեպքում, դասասենյակի և դպրոցական բակի փոխարեն կիրառելով տեխնոլոգիաներ և վիրտուալ հարթակներ:
- Առցանց խաղերը, սոցիալական մեդիան և տեսակապով զրույցների (վիդեո չաթի) ծրագրերը երեխաներին **հնարավորություններ են ընձեռում** մեկուսացման ընթացքում կապ հաստատելու և խաղալու իրենց ընկերների, ծնողների և ազգականների հետ:
- Թեև **13 և ավելի տարեկան** երեխաները կարող են արդեն իսկ ծանոթ լինել սոցիալական մեդիային, համավարակը ավելի փոքրահասակ երեխաներին ևս ծանոթացրել է սոցիալական ցանցերի գործիքներին, որոնք կարող են և նախատեսված չլինել նրանց համար, և որոնց հետ կապված նրանց պատրաստվածությունը սահմանափակ է:
- Ծնողներից և խնամողներից այդ ընթացքում պահանջվում է ուղղորդել իրենց երեխայի անցումը առցանց ուսման և ժամանցի՝ միաժամանակ հավասարակշռելով այդ ամենը իրենց աշխատանքի և համավարակով պայմանավորված այլ անորոշությունների հետ:

Առցանց գործունեության ընդլայնումը օգնում է երեխաների ուսմանը, սոցիալիզացիային և խաղերին, սակայն նաև նրանց ենթարկում է հավելյալ ռիսկի

Համացանցի ավելացող գործածումը երեխաներին կարող է ենթարկել առցանց այնպիսի վնասների հավելյալ ռիսկի, ինչպիսիք են՝ սեռական շահագործումը և կիբեր-բուլիինգը: Բոլոր ռիսկերը չէ, որ վերածվում են փաստացի վնասի, սակայն իրենց կյանքում այլ խնդիրների ևս առերեսվող երեխաները կարող են առավել խոցելի լինել: Կարևոր է, որ ռիսկերը մեղմելուն ուղղված միջոցառումները հավասարակշռվեն արտահայտվելու ազատության, տեղեկատվության հասանելիության և անձնական կյանքի վերաբերյալ երեխաների իրավունքների հետ: Երեխաների տեղեկացվածությունը և ներգրավվածությունն ապահովելը, ինչպես նաև նրանց համացանցից ապահով օգտվելու հմտություններ փոխանցելը երեխաների պաշտպանության կարևագույն բնագիծն են:

Առցանց սեռական շահագործում. WePROTECT գլոբալ ալյանսի կողմից բոլորովին վերջերս լույս ընծայված **Սպառնալիքի գլոբալ գնահատման** և **New York Times**-ի նորարարական հետաքննական թղթակցության ներկայացված են առցանց սեռական շահագործման ծավալներն ու ազդեցությունը: Շատ հավանական է, որ ՔՈՎԻԴ-19-ը բարձրացնի երեխաներին սպառնացող ռիսկի աստիճանը, ինչպես **նշվում է** ողջ աշխարհի ներպետական իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից: Համացանցում ավելի շատ ժամանակ անցկացնելը կարող է մեծացնել հավանականությունը, որ երեխաները **կապի դուրս գան** առցանց «գիշատիչների» հետ: Ֆիզիկական հեռավորությունն ապահովելուն ուղղված միջոցառումները, ամենայն հավանականությամբ, ավելացնում են նոր մարդկանց և խմբերի առցանց հասանելիությունը երեխաների համար, ինչը կարող է շահագործվել «գիշատիչների» կողմից՝ երեխաներին սեռական շահագործման համար հավաքագրելու նպատակով: Տանը մեկուսացված մեծահասակների թվի աճին զուգընթաց, կարող է ավելանալ նաև երեխայի սեռական չարաշահման նյութերի պահանջարկը, ինչը կհանգեցնի երեխաների շահադիտական սեռական շահագործման դեպքերի ավելացման: Ընտանիքի անդամների կողմից սեռական չարաշահման կենդանի հեռարձակումը արդեն իսկ հաստատված երևույթ է որոշ հանրույթների շրջանում: Տանը մնալու կարգադրությունները նաև նշանակում են, որ ընտանիքներն ստիպված են մնալ փակ բնակարաններում, որը, չարաշահող մեծահասակների հետ ապրող երեխաների պարագայում, կարող է հանգեցնել թե՛ համացանցից դուրս, և թե՛ առցանց սեռական շահագործման դեպքերի աճի:

Կիբերբուլիինգ. Հաստատված **իրողություն է**, որ կիբերբուլիինգը դեռահասների հետ կապված **լուրջ մտահոգություն է**, և այն բազմապիսի բացասական հետևանքների է հանգեցնում: Բազմաթիվ երեխաներին հանկարծ ընձեռվում է համացանցում գտնվելու ավելի շատ և չկարգավորվող ժամանակ, և այդ պայմաններում սթրեսի և կիբերբուլիինգի աղբյուրները կարող են բազմապատկվել: ՔՈՎԻԴ-19-ի համավարակը մեծ թվով փոքրահասակ երեխաների ծանոթացրել է ակնթարթային հաղորդագրությունների, առցանց խաղերի և զրույցի ծառայությունների հետ, և համացանցից օգտվելու սահմանափակ փորձ ունեցող այս երեխաները կարող են նվազ դիմակայուն լինել դիմացինի վնասող վարքի հանդեպ: Աղջիկները, հաշմանդամություն ունեցող, մյուսներից տարբեր համարվող, ՔՈՎԻԴ-19-ով վարակվելու կամ այլոց վարակելու առումով առավել

ռիսկային երեխաները ենթակա են առցանց բուլիինգի և խտրականության հավելյալ ռիսկի:

Առցանց ռիսկային վարք. Ընկերների և գուզրնկերների հետ անձնական շփումների բացակայությունը կարող է հանգեցնել մի իրավիճակի, որ ավելի բարձր տարիքի երեխաները դրսևորեն առավել ռիսկային առցանց վարք, օրինակ՝ սեռական բնույթի հաղորդագրություններ կամ **ինքնուրույն պատրաստած սեռական բովանդակությամբ նյութեր** ուղարկելով, որը կարող է նրանց ենթարկել շորթման, հետապնդման և նվաստացման:

Հավանական վնասակար բովանդակությամբ նյութեր. Համացանցում զբաղվելու տևողության ավելացումը երեխաներին կարող է առերեսել տարիքին անհամապատասխան և հավանական վնասակար բովանդակությամբ, այդ թվում՝ բռնություն, կնատյացություն, քսենոֆոբիա պարունակող, քաղաքական կամ գաղափարական բռնություն քարոզող, ինքնասպանության և ինքնավնասման հակող նյութերի: Երեխաները կարող են առերեսվել նաև մեծածավալ թիրախավորված առցանց **մարքեթինգի**, որով գովազդվում են անառողջ սնունդ, գենդերային կարծրատիպեր, կամ որոնք հարիր չեն այդ տարիքի երեխաներին: Նրանց կարող է հանդիպել **ապատեղեկատվություն** ՔՈՎԻԴ-19-ի մասին, որը կարող է հավելյալ վախ և տագնապ հարուցել:

Տեղեկատվության ոչ պատշաճ հավաքում, գործածում և տարածում. Երեխաների կյանքի անցումը առցանց ձևաչափի, այդ թվում՝ կրթական տեխնոլոգիաների միջոցով, կարող է հանգեցնել ընկերությունների կողմից երեխաների մասին տվյալների հավելյալ հավաքման ու մշակման՝ ի լրումն թվային մարքեթինգային նյութերի և մեթոդների հետ առնչության: Դա կարող է ազդել 13 տարեկանը չլրացած երեխաների վրա, ովքեր, սովորաբար, օրենքով պետք է ապահովվեն **անձնական կյանքի պաշտպանությամբ**:¹

Երեխաների ապահովության սահմանափակ հնարավորությունները՝ առցանց տիրույթում. Հեռավար ուսուցման կարգավորումները արագ կազմակերպելու մրցավազքի ժամանակ դպրոցները կարող են ձեռքի տակ չունենալ երեխայի ապահովության քաղաքականություն, որը կկարգավորեր աշակերտի և ուսուցչի գրույցը մասնավոր ցանցերի և առցանց այլ գործիքների միջոցով: Ծնողներն ու խնամակալները կարող են տեղյակ չլինել դպրոցական միավորումների քաղաքականության մասին (եթե այդպիսիք առկա են), ինչպես նաև կարող են ծանոթ չլինել **նոր տեխնոլոգիաներին**, ինչը կսահմանափակի երեխաներին ապահով ինտերնետի շուրջ երկխոսության մեջ ներգրավելու նրանց կարողությունը:

¹ Օրինակ՝ COPPA և GDPR-K.

Կառավարությունները, ընկերությունները, դպրոցներն ու ծնողները պետք է գործակցեն՝ հանուն երեխաների առցանց գործունեության ապահովության ու դրա դրական ներգործության

ՔՈՎԻԴ-19-ի համատեքստում երեխաների առցանց գործունեության ապահովության համար հարկավոր է միահամուռ գործակցություն ծնողների ու խնամակալների, դպրոցական մարմինների, թվային տեխնոլոգիայի ոլորտի ընկերությունների, ինտերնետ-պրովայդերների, սոցիալական ծառայությունների աշխատողների և կառավարությունների միջև:

1. Երեխաներին հզորացնել առցանց տիրույթում

- Ծնողներն ու խնամողները, դպրոցական մարմինները, թվային տեխնոլոգիայի ոլորտի ընկերությունները, մեդիա-պրովայդերները, սոցիալական ծառայությունների աշխատողները և կառավարությունները պետք է ընդունեն, որ երեխաները փոփոխությունների առաջատարն են, և որ իրենք պետք է երեխաներին ապահովեն գիտելիքով և տեղեկատվությամբ, որ անհրաժեշտ է նրանց՝ ՔՈՎԻԴ-19-ի ճգնաժամի ընթացքում և դրանից հետո ապահով առցանց գործունեություն վարելու համար.
- Թվային աշխարհում կողմնորոշվելու վերաբերյալ ուղերձները, տեղեկատվությունն ու խորհրդատվությունը երեխաներին պետք է հասցվեն նրանց համար ընկալելի եղանակով և ուղիներով: Երեխաները պետք է տեղյակ լինեն այն մասին, թե ինչպես կարող են օգնություն և աջակցություն ստանալ.
- Երեխաներին պետք է նաև խրախուսել՝ բարձրացնել իրենց ձայնը առցանց տիրույթում՝ ի աջակցություն ճգնաժամի ընթացքում օգնության կարիք ունեցողների: Երեխաների պատկերացումները պետք է դրվեն համապատասխան հարթակների բարելավումների և այլ փոփոխությունների հիմքում, որոնց նպատակն է՝ նրանց ներգրավված և ապահով պահել այս արագ զարգացող արտակարգ իրավիճակի պայմաններում: Կառավարությունները և սոցիալական ծառայություն մատուցողները պետք է **երեխաների ձայները** լսելի դարձնեն, իսկ հենց իրենց՝ երեխաներին, ակտիվորեն մասնակից դարձնեն նրանց վերաբերող քաղաքականության մշակման գործընթացում:

2. Աջակցել ծնողներին ու խնամակալներին, որպեսզի նրանք օգնեն երեխաներին՝ առցանց տիրույթում ապահով լինելու հարցում

- Ծնողները և խնամակալները կարող են օգնել երեխաներին, որպեսզի վերջիններս օգտվեն ՔՈՎԻԴ-19-ի այս ժամանակաշրջանում սովորելու, սոցիալիզացիայի և խաղի համար կենսական նշանակություն ունեցող առցանց աղբյուրներից: Մինչույն ժամանակ, ծնողներն ու խնամակալները պետք է զգոն լինեն երեխաներին սպառնացող **առցանց ռիսկերի** հարցում: Կառավարությունները, ընկերությունները և այլ դերակատարներ պետք է ծնողներին աջակցեն համապատասխան **ուղորդամբ և գործիքներով**, այդ թվում առ այն, թե ինչպես պետք է արձագանքել վնասակար շփումներին, վարքին և նյութերին:
- Ծնողները և խնամակալները կարող են իրենց երեխաների հետ միասին կանոններ սահմանել առ այն, թե երբ և որ դեպքերում կարելի է օգտվել համացանցից: Պետք է

գծվեն սահմաններ՝ առցանց գտնվելու ժամանակահատվածի և այլ գործողությունների միջև առողջ հավասարակշռություն ապահովելու համար: Ծնողներն ու խնամակալները պետք է նաև այնպես անեն, որ իրենց երեխաների ձեռք տակ առկա սարքը/սարքերը ունենան ծրագրային ամենաթարմ ապահովումը և հակավիրուսային ծրագրերը, և համոզվեն, որ գաղտնիության կարգավորումներում նշված լինի «բարձր» (high) տարբերակը: Ավելի փոքրահասակ երեխաների դեպքում առցանց ռիսկերը կարելի է մեղմել այնպիսի գործիքների միջոցով, ինչպիսին է ծնողական հսկողության գործիքը:

- Ծնողները և խնամակալները կարող են իրենց երեխաների հետ բաց քննարկել, թե ինչպես և ում հետ են երեխաները շփվում առցանց եղանակով: Երեխաները պետք է իմանան, որ շփումները պետք է լինեն բարի և աջակցող, և որ վնասակար, **խտրական** կամ ոչ պատշաճ շփումը երբեք չի կարող նորմալ համարվել: Երեխաները պետք է չխուսափեն որևէ սթրեսային կամ ոչ պատշաճ դրսևորումների բախվելիս վստահելի մեծահասակին անմիջապես հայտնելուց:
- Ծնողներն ու խնամակալները կարող են նաև օգնել երեխաներին՝ տարբերակել սովորական բովանդակությունը գովազդից, և իրենց երեխաների հետ երկխոսության միջոցով փորձել հակադրվել այս կամ այն բացասական ուղերձներին:
- Ծնողներն ու խնամակալները պետք է զգոն լինեն սթրեսի նախանշանների նկատմամբ, որոնք կարող են առաջանալ երեխաների առցանց գործունեության կապակցությամբ: Օրինակ, եթե երեխան կիբեբբուլիինգի է առերեսվում, նա կարող է զգուշացնող նշաններ դրսևորել, ինչպիսիք են, օրինակ, ձեռքի տակ եղած սարքից ավելի հաճախ կամ ավելի հազվադեպ օգտվելը կամ ինքնամիտք կամ դեպրեսիվ վարքը: Կառավարությունները, ընկերություններն ու դպրոցի ղեկավարները պետք է ծնողներին և խնամակալներին ծանոթացնեն համապատասխան քաղաքականության, ինչպես նաև դեպքերի մասին հայտնելու առցանց և ցանցից դուրս առկա մեխանիզմների մասին: Ծնողները պետք է ձեռքի տակ ունենան օգնության հեռախոսահամարների և թեժ գծերի համարները, և դիմեն ուստիկանություն, եթե իրենց երեխաների սթրեսը կապված է սպառնալիքների, հավանական հանցագործությունների կամ հակաօրինական այլ արարքների հետ:

3. Աշակերտներին տրամադրել ապահով առցանց ուսման հնարավորություններ

- Դպրոցները պետք է ստեղծեն **պաշտպանական քաղաքականություն**, կամ թարմացնեն դրանք, եթե այդպիսիք առկա են՝ արտացոլելու համար դասերը տանը անող երեխաների նոր առօրյան: Դպրոցի անձնակազմի ներկայացուցչի և աշակերտի միջև առանձին անձնական շփումները պետք է լինեն թափանցիկ և կանոնակարգված: Պաշտպանական միջոցներ կարող են լինել դասացուցակները առցանց հրապարակելը, վեբ-տեսախցիկների առջև հայտնվելիս պատշաճ հագուստ կրելու, ուսուցիչների և վիրտուալ դասարանի հետ ննջարաններից չկապվելու մասին երեխաներին խորհուրդներ տալը, ուսուցիչ-աշակերտ շփման ընթացքում ակնթարթային հաղորդագրություններով շփվելուց խուսափելը կամ, նման շփման անհրաժեշտության դեպքում, ծնողների համաձայնությունն ստանալը: Դպրոցները պետք է փորձեն ունենալ անվտանգային մեխանիզմներ, որոնք կապահովեն, որ միայն իրավասու անձինք կարողանան մուտք գործել առցանց ուսուցման հարթակներ, և որ այդ հարթակները ինքնաբերաբար չձայնագրեն և չպահպանեն վիրտուալ դասերը:

- Դպրոցները պետք է պարզ լեզվով ներկայացնեն առցանց անվտանգության քաղաքականությունը և տեղեկատվություն և **ռեսուրսներ տրամադրեն** թվային անվտանգության վերաբերյալ՝ ի աջակցություն դրական առցանց ուսումնական գործընթաց ձևավորելու հարցում ծնողների և խնամակալների ջանքերի, օրինակ՝ [Interland](#), [internetmatters.org](#), [NSPCC](#) և [Childnet International](#) հարթակները:
- Դպրոցները բոլոր սաներին պետք է հստակ տեղեկացնեն թվային հարթակներում վարքագծի և հաղորդակցության ակնկալվող կանոնների մասին, որոնք պետք է լինեն ճիշտ այնպիսին, ինչպես «դեմառդեմ» շփումների ժամանակ: Դրանք պետք է խթանեն և մշտադիտարկեն աշակերտների առցանց վարքագիծը: Դպրոցները պետք է տեղյակ լինեն, որ հատկապես փոքրահասակ երեխաները կարող են բավարար չափով կամ ընդհանրապես չունենալ նման հմտություններ, և կարող են պատահամաբ վնասել ուրիշներին: Դպրոցի տարածքում դասընկերների միջև բուլիինգը հեշտությամբ կարող է վերածվել կիբերբուլիինգի, և դպրոցական մարմինները պետք է հակաբուլիինգային կանոններն ու քաղաքականությունը հարմարեցնեն առցանց տիրույթներին և դրանք հասկանալի դարձնեն աշակերտների և ծնողների համար:
- Դպրոցները պետք է ապահովեն, որ երեխաները կարողանան անընդհատ օգտվել դպրոցահեն խորհրդատվական ծառայություններից: Խորհրդատուների հետ առերես շփման բացակայության պայմաններում, սթրեսի ենթարկված երեխաները պետք է ձեռքի տակ ունենան առցանց կամ հեռախոսային աջակցության ապահով և կոնֆիդենցիալ միջոցներ: ՔՈՎԻԴ-19-ի պայմաններում, երբ երեխաները առերեսվում են ընտանեկան խնդիրների, ընտանեկան բռնության կամ անապահովության, և տազնապի հավելյալ զգացողություններ են ունենում, կարող է ավելանալ խորհրդատվական ծառայությունների կարիքը: Աղջիկները, հաշմանդամություն ունեցող, մյուսներից տարբեր համարվող, ՔՈՎԻԴ-19-ով վարակվելու կամ այլոց վարակելու առումով առավել ռիսկային երեխաները կարող են առերեսվել հավելյալ տազնապների, և դրանք լրացուցիչ աջակցություն են ենթադրում: Դպրոցները պետք է խթանեն տվյալ երկրին բնորոշ **օգնության** հեռախոսահամարների կամ առցանց խորհրդատվական հարթակների գործունեությունը: Դպրոցները պետք է նաև վերանայեն ուսուցիչների համար նախատեսված ուղեցույցները՝ իրենց վիրտուալ շփումների ընթացքում երեխայի նկատմամբ չարաշահման կամ անտեսման դեպքերի հայտնաբերման և դրանց մասին հայտնելու վերաբերյալ:

4. Առցանց հարթակները երեխաների համար ապահով և հասանելի դարձնելը

- Համավարակի ընթացքում անհավասարությունների արմատավորումից խուսափելու համար, տեխնոլոգիական ընկերությունները պետք է գործակցեն կառավարությունների հետ՝ բարելավելու համար թվային սարքերի և ինտերնետային կապի հասանելիությունը հնարավորություններից զրկված, այդ թվում՝ աղքատության մեջ ապրող, ծնողներից զրկված, տեղահանված, հաշմանդամություն ունեցող, ընտանեկան բռնության պայմաններում, հակամարտության գոտիներում ապրող, համավարակի հետևանքով ծնողներին կամ առաջնային խնամողին կորցրած երեխաների համար: ITU-ի նոր [Global Network Resiliency Platform](#) հարթակը (**#REG4COVID**) մի վայր է, որտեղ ոլորտի կարգավարները, պետական մարմինները և ոլորտի դերակատարները՝ ընդհանուր առմամբ, ներկայացնում և մեկտեղում են իրենց փորձը, ընթացիկ նախաձեռնությունները և նորարարական քաղաքականությունն ու

կարգավորիչ միջոցառումները, որոնք նախատեսված են համայնքների (և երեխաների) միջև կապի պահպանմանն օգնելու համար: Տեխնոլոգիական ընկերությունները պետք է նաև ապահովեն առցանց ուսումնական ռեսուրսների անվճար կամ էապես ավելի մատչելի հասանելիությունը մանկավարժների և աշակերտների համար: Բջջային կապի օպերատորները պետք է քննարկեն առցանց ուսուցման ռեսուրսների և ՔՈՎԻԴ-19-ի մասին առողջապահական բնույթի տեղեկատվության անվճար տրամադրման հնարավորությունը:

- Պարտադիր պայման է, որ ապահովության հավելյալ միջոցներ ներդրվեն բոլոր սարքերում, այդ թվում այնպիսիք, որոնք հասանելի են ցածր գնով կամ անվճար, և որ ծնողներին ու խնամակալներին բացատրվի, թե ինչպես կարող են ակտիվացնել այդ միջոցները:
- Վիրտուալ դասասենյակներ մշակող և գործարկող ընկերությունները և կրթությանն առնչվող այլ հարթակները պետք է ապահովեն, որ **անվտանգային միջոցները ինտեգրվեն, ամրապնդվեն** և միանշանակ հասանելի լինեն մանկավարժների, ծնողների և աշակերտների համար: Տվյալների հավաքման և կոմերցիոն բնույթի այլ գործունեությունները պետք է լինեն թափանցիկ և պատասխանատու, և արտացոլեն ներպետական/միջազգային օրենսդրության և կանոնակարգերի պահանջները: Սոցիալական ցանցերի ձևավորման հարթակները, որոնք կիրառվում են ուսուցիչ-աշակերտ շփումների համար, պետք է ունենան պաշտպանության ներքին միջոցներ՝ նախատեսված երեխաների համար, որոնք ուսուցիչներին տրամադրում են համապատասխան թույլտվություններ՝ իրենց գործառույթներն իրականացնելու համար: Ավելին, առցանց հարթակները, որոնցում կիրառվում են վիդեոկոնֆերանսների ծառայություններ, և որոնք գնալով ավելի ու ավելի են գործածվում առցանց ինտերակտիվ հանդիպումների ժամանակ, պետք է ապահովեն անվտանգության և գաղտնիության պաշտպանության համապատասխան միջոցների առկայությունը:
- Ընկերությունները պետք է օգտագործեն իրենց հարթակները՝ խթանելու և տարածելու համար երեխայի անվտանգության ուղղորդող ծառայությունները և օգնության հեռախոսահամարները ներկա պահին կրթությունից դուրս մնացած շուրջ **1.5 միլիարդ երեխաների** և երիտասարդների համար, որոնցից ոմանք կարող են հոգեւոցիալական սթրեսի, բնության և շահագործման հավելյալ ռիսկի ենթարկվել: Խոսքը գնում է երիտասարդների համար հասանելի ուղղորդման և աջակցության այլ ծառայությունների, օրինակ՝ երեխաների օգնության համապետական հեռախոսահամարների վերաբերյալ տեղեկատվություն տարածելու մասին: Ընկերությունները կարող են փորձել ավելացնել երեխաների օգնության հեռախոսահամարների թողունակությունը՝ քլաուդային ենթակառուցվածքների և ինտերակտիվ ձայնային պատասխանի (IVR)/bot համակարգերի միջոցով ավտոմատացնելով հեռախոսային հարցումները: Բջջային կապի օպերատորները պետք է գործարկեն կարճ կոդերով կամ անվճար զանգերի հնարավորություններ՝ ազատելով միացման վճարներից և խթանելով երեխաների համար նախատեսված ուղղորդման և օգնության հեռախոսահամարների ռեսուրսները:
- Քանի որ համավարակը փոքրահասակ երեխաներին փոխադրում է կրթական և սոցիալական ցանցեր (ոմանց դեպքում՝ առաջին անգամ), ընկերությունները պետք է նշանակալի ջանքեր գործադրեն այդ երեխաներին, նրանց ծնողներին և

խնամակալներին օգնելու ուղղությամբ, որպեսզի վերջիններս սովորեն ապահով պայմաններում օգտվել առցանց ռեսուրսներից: Այդ թվում.

- Ապահով առցանց ռեսուրսները հարմարեցնել տարբեր տարիքային խմբերի կարիքներին և դրանք առավել հասանելի դարձնել իրենց իսկ հարթակներում՝ երեխաներին, ծնողներին և խնամակալներին առցանց ռիսկերի մասին տեղեկացնելու և աջակցող ծառայությունների հասանելիությունն ապահովելու համար.
- Առաջարկել պատկերավոր և օգտագործման մեջ դյուրին տեխնիկական գործիքներ և լուծումներ (օրինակ՝ «ծնողական հսկողություն» գործիքը), որոնք ծնողներին և խնամակալներին թույլ կտան օգնել իրենց երեխաներին, որպեսզի վերջիններս թվային տեխնոլոգիայից օգտվեն տարիքին հարիր պայմաններում:
- Լայնորեն տարածել ուղերձներ առցանց տիրույթում ապահով և պատասխանատու վարքի մասին, և աջակցել երեխաներին, որպեսզի նրանք ձեռք բերեն «թվային աշխարհում դիմակայելու» հմտություններ, այլ խոսքով ասած՝ գիտելիք առ այն, թե ինչպես կարող են կողմնորոշվել այդ աշխարհում և դիմագրավել ռիսկերին:

5. Ամրապնդել կանխարգելման, արձագանքման և աջակցության ներպետական ծառայությունները

- Կառավարությունները պետք է ակտիվորեն մշտադիտարկեն, թե տեղաշարժի սահմանափակումները և մեկուսացումները ինչպես կարող են խորացնել թե՛ առցանց, և թե՛ ցանցից դուրս բնության տարբեր դրսևորումները՝ քաղաքականությունը հազեցնելով ամենաթարմ տվյալներով և **առկա մոդելների** մասին տեղեկություններով: Կառավարությունները պետք է գործի դնեն առկա կանոնակարգերը և ամրապնդեն իրավապահ գործունեությունը՝ հավելյալ առցանց ռիսկերը մշտադիտարկելու և դրանց արձագանքելու նպատակով:
- Կառավարությունները պետք է բավարար միջոցներ հատկացնեն երեխայի պաշտպանության ոլորտի հիմնական աշխատողներին օժանդակելու, վերապատրաստելու և զինելու նպատակով՝ ապահովելու համար, որ նրանք կարողանան պահպանել համավարակի ընթացքում երեխաների անվտանգությունը: Հնարավոր բոլոր դեպքերում երկրները պետք է պահպանեն կենտրոններում տրամադրվող աջակցության ծառայությունները և տնայցերի հնարավորությունը առավել տուժած անձանց համար կամ հարմարեցնել սոցիալական ծառայությունները և դրանք մատուցել վիրտուալ եղանակով:
- Կառավարությունները պետք է ապահովեն առողջապահության, կրթության և սոցիալական ծառայության ոլորտի աշխատողների վերապատրաստումը այն հետևանքների մասին, որ ՔՈՎԻԴ-19-ը կարող է ունենալ երեխայի բարօրության վրա, այդ թվում՝ հավելյալ առցանց ռիսկերի: Առաջնագծում հոգեկան առողջության ծառայություններ/հոգեբանական աջակցություն ցուցաբերողները պետք է ունենան ՔՈՎԻԴ-19-ի մասին երեխաների հետ խոսելու և նրանց տազնապնդելու ու անապահովությանը արձագանքելու հմտություններ: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի ամենախոցելի, այդ թվում՝ ընտանիքից բաժանված, տեղահանված, հաշմանդամություն ունեցող, հակամարտության գոտիներում ապրող կամ

համավարակի հետևանքով ծնողներին կամ առաջնային խնամակալներին կորցրած երեխաներին:

- Կառավարությունը պետք է քաջատեղյակ լինի համավարակի ընթացքում երեխաներին սպառնացող հավանական հավելյալ առցանց ռիսկերի մասին և ձգտի արձագանքել դրանց հավելյալ մշտադիտարկման և առկա կարգավորումների կիրառման միջոցով: Պետք է աջակցել իրավապահ մարմիններին, որպեսզի դրանք մշտադիտարկեն առցանց հանցավորության հնարավոր ավելացումը, իսկ դրանց ստորաբաժանումները ի վիճակի լինեն արձագանքելու այդ դեպքերին:
- Կառավարությունները պետք է ապահովեն, որ սոցիալական ծառայություն մատուցողները, դպրոցները, ծնողները, խնամակալները և երեխաները տեղեկացված լինեն դեպքերի մասին հայտնելու տեղական մեխանիզմների վերաբերյալ, ինչպես նաև, որ նրանք ձեռքի տակ ունենան տվյալ վայրում գործող օգնության հեռախոսահամարներն ու թեժ գծերի համարները: Եթե այդպիսիք առկա չեն, ապա հարկավոր է տեղում գործարկել օգնության հեռախոսահամարներ և թեժ գծեր՝ ի աջակցություն սթրեսային վիճակում գտնվող երեխաների: Դեպքերի մասին հայտնելու խոշոր միջազգային ցանցերից են [INHOPE Hotlines](#) և [IWF portals](#) հարթակները: Երեխաները կարող են անմիջական աջակցություն ստանալ ներպետական [Child Helpline](#)-ի միջոցով: Հանրությունը պետք է ուղղորդվի դեպի ոստիկանություն այն դեպքերում, երբ առկա է անմիջական վտանգ:
- Ի լրումն երեխաներին ուսման, սոցիալիզացիայի և խաղերի առցանց ռեսուրսներին միացնելու ջանքերի, կառավարությունները պետք է հանդես գան երեխայի առցանց անվտանգության վերաբերյալ կրթական նախաձեռնություններով: Նման նախաձեռնություն կարող է լինել առցանց ռիսկերի և ռեսուրսների մասին իրազեկության բարձրացումը՝ լրատվամիջոցներով և հաղորդակցության այլ խողովակներով տարածելով հիմնական ուղերձները:

Հավելյալ ռեսուրսներ

[Ծնողավարման խորհուրդներ](#)՝ ՔՈՎԻԴ-19-ի պայմաններում երեխաների առցանց

անվտանգությունն ապահովելու վերաբերյալ

www.unicef.org/press-releases/covid-19-children-heightened-risk-abuse-neglect-exploitation-and-violence

amidst

www.unicef.org/coronavirus/covid-19-parenting-tips

www.end-violence.org/protecting-children-during-covid-19-outbreak

en.unesco.org/covid19

www.unicef.org/coronavirus/covid-19

www.itu.int/en/Pages/covid-19.aspx

www.childhood-usa.org/resources

www.unodc.org/unodc/en/covid-19.html

ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ

Պետրոս Ադամյանի 14, Երևան, +37410580174, yerevan@unicef.org

www.unicef.am

www.babycef.am

[Կորոնավիրուսի վերաբերյալ թարմացվող լրահոսի կայքէջ](#)